

ք. Եղեգնաձոր

19.10.2015թ.

ԶՈՒՎԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆ. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾԱՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁԱՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝

փոխմարզպետ , հանձնաժողովի նախագահ

Մ.Հարությունյանը

հանձնաժողովի անդամներ՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Գրիգորյանը, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ.Գևորգյանը, քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ռ.Մինասյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի մարզպետի խորհրդական Վ.Ասլանյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի քաղաքապետի տեղակալ Վ.Ավագյանը, Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ.Թադևոսյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ն.Սիմոնյանը, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Յ. Բաբայանը / քարտուղար/:

Բացակայում է Վայոց ձորի մարզի ԵԿՄ նախագահ Թ. Ավետյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Հանձնաժողովի կողմից տնային այցելությամբ ուսումնասիրված զոհված Ռուբիկ Եսայանի և 2-րդ խմբի հաշմանդամ Հովիկ Պետրոսյանի բնակարանային պայմանների ստուգման արձանագրությունները:

2. ՀՀ Կառավարության 2005թ. հունիսի 9-ի 'Անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին' N947-Ն որոշման համաձայն ուսումնասիրել 2003-2013թվականների ընթացքում մարզում հաշվառված զոհված/մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ բնակարանային գործերում առկա փաստաթղթերը և կատարել համապատասխան փոփոխություններ:

Լսեցին՝ Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց զոհված Ռուբիկ Եսայանի, 2-րդ խմբի հաշմանդամ Հովիկ Պետրոսյանի, 2-րդ խմբի հաշմանդամ Հազարապետ Աղախանյանի բնակարանային պայմանների ուսումնասիրության արձանագրությունները:

Առաջարկեց 2003-2015թվականների բոլոր գործերը ուսումնասիրել և շտկել առկա թերությունները, հերթագրումը համապատասխանեցնել գործում առկա բնակարանային պայմանների ստուգման ակտերին:

Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ.Գևորգյանը առաջարկեց բնակարանային պայմանների ստուգման ակտերի համաձայն հերթացուցակում կատարել փոփոխություններ 2005թ. հունիսի 9-ի 947-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝

1.Ռուբիկ Եսայանի և Հովիկ Պետրոսյանի բնակարանային պայմանների ստուգման ակտերը ներկայացնել ՀՀ ՊՆ:

2. 2015 թվականի հերթացուցակի մեջ կատարել փոփոխություններ և ներկայացնել ՀՀ ՊՆ:

Գրություն համար

Համար

Արտագրվել է

Համար

Կրկնագրվել է

Համար

Համար

Համար

Համար

Համար

Հանձնաժողովի նախագահ՝
Քարտուղար



Մ.Հարությունյան

Յ.Բաբայան